

ՏԵՕՐԷՆ-ԼԵՍՐԱԿՐԱՅՈՒՆ

Հ. ՄԱՄՈՒՐԻԱՆ

ԲԱՏԻՆՈՐԿԱԳՐԱԹԻՒՆ

Տարեկան	500 դր.
Վեցամսյան	250 »
Չուսման	150 »
Սրտատու հման տրվ.	70 ճր.

Բաժար օրագրություն կ'սկսվի ամի 6 ամսոյ 1ից եւ 15

100 ՓՈՐԱ



Fondateur
M. MAMOURIAN
Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN
Arévélian Mamoul,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

Օրաթերթ ազգային եւ ֆազաֆական

100 ՓՈՐԱ

ՆԵՐԳԱՂԹԻ ՓԱՓՈՒԿ ՀԱՐՑԸ

Անցեալ տարուան Յունվար 14 և 15 թիւերուն մէջ երկու յօդուածներ նուիրած էինք «Մրազիր մը մշակել հարկ է» ընդհանուր վերնագրին տակ, մին «Գաղթի հարցը» և միւսը «Տեղագիտութիւն» վերաբերեալ:

Տարի մը առաջ առաջարկ կ'ընէինք որպէսզի ներգաղթի խնդրոյն համար ծրագիր մը մշակուի, այդ նպատակով գրամագրուելու մը հիմնուի, որպէսզի յանկարծակիի չգայինք, երբոր կազմուէր անկախ Հայաստանը:

Տարի մը առաջ մեծ յոյսեր կ'առնէինք թէ՛ Հայկական խնդրին իր տարագրուածութիւնը պիտի ունենայ, զփառազարար ամենքս ալ յուսախոր եղանք այդ մասին և տարին անցաւ ու դեռ վերջնական փուլի մը մէջ չըրուեցաւ Հայկական անկախութեան հարցն, այսինքն թէ՛ և Հայաստանի անկախութիւնն ընդունուած, սակայն Հայաստանի սահմաններն դեռ վերջնական կերպով չեն ծանօթացուած:

Այլևս տարակոյտ չունինք սակայն, թէ՛ այդ սահմանները մտաւոր օրերու մէջ իրենց վերջնական կողմադրուելու պիտի ստանան և ընականաբար Համաձայնական պետութիւններն այդ սահմաններու մէջ Հայոց իրաւունքներն պաշտպանելու համար հարկ եղած միջոցները պիտի խորհին, որպէսզի Հայ ժողովուրդն սկսի խաղաղօրէն իր գաղթի կենսական գործին:

Ներգաղթի փափուկ ու կենսական գործին մղում տալու համար, ուրախ ենք որ Իզմիր նախաքայլն կ'առնէ: Մեր երէկուան թիւով ծանուցած էինք յանձնաժողովոյ մը կազմութիւնն և այդ յանձնաժողովոյ կողմէ մասնախումբի մը անուանումը, մշակելու համար ներգաղթի յարմարագոյն ծրագիր մը:

Ներգաղթի գործին բարեյաջող ընթացք մը տալու համար կարևոր է նախ և առաջ պատկանելի նիւթական օյժի մը գոյութիւնը:

Հայրենիք երթալ փափաքող ժողովուրդն ընտանեկանաբար պիտի բաղկանայ միջակորեար դասակարգէն, ընդ Հայաստանցիներէ, որոնք իրենց անհատական միջոցներով չպիտի համարձակին հայրենիք գիմնել, եթէ իրենց նիւթական կարևոր օժանդակութիւնն մը ձեռնառու չգտնուի, հաւանական է որ նոյն իսկ իրենց ընտանիքներն չյաջողին առաջին առթիւ միասին տանիլ, որով ներգաղթի յանձնաժողովին վրայ պարտք պիտի ծանրանայ որոշ պայմանաժամի մը համեմատ այդ ընտանիքներու խնամքն ստանձնել:

Ասկից զատ ներգաղթի յանձնաժողովն, մեր կարծիքը, հարկ է որ ձեռքն հաս քանի մը անձերէ իրեն օժանդակ մարմին մը կազմէ, որոնք պատրաստակամութիւն ունենան ուղևորելու դէպի հայրենիք և բուն իսկ տեղւոյն վրայ կատարելու ուսումնասիրութիւններ և պրոպագանդներ, և զրկել իրենց տեղեկագիրներն հետզհետէ, ուսումնասիրութիւններ համար տեղւոյն կեդրոնական յանձնաժողովին կողմէ, որպէսզի իր կարգին կարենայ որոշ գաղափար մը կազմել յետոյ, հրաւեր կարող ժողովուրդին, գաղթելու այս կամ այն հողամասերուն վրայ:

Բնականաբար այժմու Հայկական կառավարութիւնն և վաղը միւս օր ամբողջական Հայաստանի կառավարութիւնն պիտի կրնան մեծապէս օգնել ներգաղթի յանձնաժողովին, հայթայթելով բոլոր տեղեկութիւններն, որոց պիտի կարօտի յանձնաժողովը:

Հարկ է նկատի ունենալ նախ և առաջ, թէ՛ Իզմիրէ և անոր շրջակայքէն գաղթի փափաքող ժողովուրդն ո՛ր տեսակ դասակարգերու կ'պատկանի և ի՞նչ տեսակ զբաղմունքներով կ'պարսպալի: Մեր կարծիքով ներգաղթի յանձնաժողովն պէտք է նախ և առաջ մասնաւոր շրջաբերականներով հրաւեր ուղղել Իզմիրի կուսակալութեան մէջ գտնուող հայրութեան և նախապէս պատրաստ գաղթի փափաքող հայերու դասակարգութիւնն, անոնց նիւթական կացութիւնը, արհեստաւոր թէ՛ հողագործ դասակարգի կամ այլ ճիւղերու պատկանելին, վերջապէս կանոնաւոր վիճակագրութիւնն մը, միևնոյն ժամանակ արձանագրելով գաղթի փափաքողներու տուած նախապատուութիւնն Հայրենիքի որոշ մասերուն վրայ, որովհետև կրնան գտնուել գաղթելու պատրաստակամութիւն ունեցողներու մէջ շատեր, որոնք փափոքին Երևանի Հանրապետութեան սահմաններուն մէջ հաստատուել, կրնան գտնուել ուրիշներ ո՛րնք նախապատուութիւն տան թրքահայաստանի այս կամ այն հողամասերուն նկատմամբ և ուրիշներ որ նախընտրեն կիլիկիոյ շրջանը:

Ներգաղթի յանձնաժողովն այդ լիակատար վիճակագրական ցուցակներն աչքի առջև ունենալէ յետոյ միայն կրնայ բանակցութիւններ մշակել Հայ Հանրապետութեան այժմու և ապագայի ամբողջական Հայաստանի կառավարութեան հետ, ինչպէս նաև իր առաքելութիւնն զրկել այն հողամասերուն վրայ, որոց մասին որոշ տեղեկութիւններ հնար չէ ունենալ այժմու կառավարութեան միջոցաւ:

Վանի, Մուշի, Երզրումի, Թարսիսի կամ այդ շրջանակներէն Իզմիր գտնուող հայ մը բնականաբար իր հայրենիքն պիտի նախընտրէ և որովհետև այդ վայրերու իսկական կացութեան ու վիճակի մասին որոշ տեղեկութիւններ չկան, այդ տեղեկութիւններն կրնան միայն քաղուել տեղէն զրկուելիք մասնաւոր յանձնախումբէն կամ այդ տեղերու մէջ կազմուելիք ներգաղթի յատուկ մարմիններէն, որոնք առայժմ գոյութիւն չունին և բնական է որ սպառնալից հետզհետէ ունենան, նկատելով որ առայժմ դժուար է այդ վայրերու համար մասնաւոր մարմին մը առաքուլ:

Ներգաղթի տեղւոյն յանձնախումբն կրնայ շատ արդիւնաբեր գործունէութիւն մը ունենալ, եթէ կանոնաւոր ու մեթոտիկ աշխատութիւն մը ընդ-

գրկէ և մենք այն յոյսն ունինք, թէ՛ պիտի յաջողի այդ արդիւնաբերութիւնն ձեռք անցնել, որովհետև յանձնախումբի անդամներն ամեն կերպով կ'երաշխաւորեն թէ՛ յարատև ու նախագահ նուիրուով մը պիտի փարին իրենց ստանձնած գործին:

Հ. Մ.

ԼՍՏԵԼՔՅՆ ՄԵՑ

ԶԳԱՆԻ ՊԱՎԱՍ ՄԸ

Շատեր օրոտնեղութիւն յայտնեցին և մեղադրեցին, Պատրիարքանի զբլուխ-գործոց նամակը հրատարակուելուն համար «Ա. Մամուլ»ի մէջ:

Թերթիս համակիր այդ անհատները իրենց արդար զայրոյթին ու իրաւունքին մէջ կ'գտնուին, սակայն միւս կողմէ պէտք է խորհին թէ՛ գիմակազերծ ընելու համար այդ սուտ ազգասէր և կեղծ հայրենասէր հայտնիչներն, անոնց ցափուտութիւններն հարկ էր որ ծանօթանային ընթերցողները: Երբ այդ հայտնիչներն զէմ գըրուած լուրջ ու տրամաբանական պատասխաններուն տեղ կ'տրուէր հայ թերթերու ինչպէս նաև «Ա. Մամուլ»ի մէջ:

Անդրանազէտ այդ Պատրիարքին ունեցած համոխոսներն, որոց թիւը նոյնիսկ իր կուսակցութեան մէջ չեմ կարծեր թէ մեծ թիւ մը կրնայ կողմել, կրնային տուարկել, թէ՛ այդ նամակին պատասխաններն հրատարակելով միակողմանի ընթացքի մը կը հետեւէին և թէ՛ ընթերցողներն անհարգ կ'թողուէին մասնաւոր կամ նպատակաւոր զիտումներով:

Ան այս պատճառներն աչքի առջև ունենալով յարմար դատուած էր այդ ողորմելի նամակին հրատարակութիւնը:

Պիտի կարգ մը թերթերն հետեւած են «Ա. Մամուլ»ի ուղղութեան և իրենց պատասխաններով միասին հրատարակած են այդ նամակը:

Եւ նամակը հրատարակելով էր որ պիտի կրնար խոյտառակուել այդ մարդը կ'պատկերացնէ իր անդրաւանդութիւնն, իր կուսակցամոլութիւնն, իր անձնական հաշիւներէն զուրա բան մը չտեսնելն, իր նախանձն ու ատելութիւնն մեծ հայուն հանդէպ, վե ջապէս մէկ խօսքով իր սրտին ու հոգիին սեւութիւնը:

«Ժողովուրդի Ձայն» կ'պահանջէ այդ մարդուն հո կանչուելը Հայ կառավարութեան, որո ներկայացուցիչի պաշտօնն ունի միւրիկաի մէջ, եթէ հայ հանրապետական կառավարութիւնն այդ քայլն չառնէ և իր ներկայացուցիչին արժանի պատիժն չտայ, շատ ձախող ընթացք մը ընդգրկած պիտի ըլլայ, ալ ժամանակն եկած է որ իբրև արդար կառավարութիւն մը, մէկ կողմ գնէ կուսակցական ամեն տեսակ ճշմոտութիւններ և կորովի կերպով վերաբերուի Պատրիարքաներու նման անպատասխանատուներու հետ և զիմակազերծ ընէ ազտու ու ցարչանք ազդող հոգիները, այն ժամանակն է որ ամենքս ալ պիտի բարորոնք այդ կառավարութեան շուրջ կողմէ Գաղտնիցական չըլլայ, կուզէ շնչակեան, կողմէ Ազգայնական կամ Հակազգայնական ու Ընկերավարական կառավարութիւն մը պէտք է ամենքէն ալ բարձր, ամենքէն ալ անկախ, ցոյց տայ թէ՛ արդարագատ ու անկոմսակալ է:

ԵՍ

Կեանքի պայմանները միշտ փոփոխութեան ենթակայ են, և ինչ որ սակէ դար մը կամ աւելի առաջ բուրովին անձանօթ մնացած էր և կամ անպիտոյ, անկարևոր նկատուած ներկայիս ստէպ կը տեսնենք որ անհրաժեշտ ըլլալէ աւելի, առանց անոր մեր գոյութիւնը, մեր բարօրութիւնն անգամ վտանգի ենթարկուած պիտի ըլլար:

Այլևս ընդունուած իրողութիւն մըն է թէ օրուան պահանջներուն համաձայն պէտք է գծենք և պատշաճեցնենք մեր կեանքի պայմանները, ըլլան անոնք ընտանեկան, ազգային կամ քաղաքական շրջանակի մէջ, քանզի հակառակ պարագային, ինչպէս անհատներ, նոյնպէս ալ ազգեր, երբեք չի պիտի կարողանային խուսափել շատ մը անհաճոյ և տխուր հետեանքերէ որոնք կրնային յառաջ գալ երբ հին դրութեանց և տեսակետներու յամառաբար կառչած, մեծամասնութիւններու և մասնաւորաբար Եւրոպական Մեծ Տէրութեանց կողմէ ընդունուած և կիրարկուած պայմանները, մեր ազգային կամ քաղաքական կեանքին մէջ ներմուծելու անհրաժեշտութիւնը չըմբռնենք:

Մինչ Հայոց, Եւրոպական շատ մը վարդապետութեանց և սպառնալիցներու այնքան զիւրաւ հետեւած ենք միշտ, նոյնիսկ երբեմն առանց նկատի առնելու թէ մեզի համար օղտակար ըլլալէ աւելի վնասակար կըրնային ըլլալ անոնք, նշանակելի կէտ մըն է որ, մինչև ցարդ զիւրապետութեան արուեստին մասին շատ քիչ գաղափար ունեցած ենք, քանի մը բացառութիւններէ զատ, գրեթէ այդ ճիւղը մեզի բոլորովին անձանօթ մնացած է: Անցելոյն մէջ ատոր պատկար թիւրևս այնքան զգալի եղած չէ, որովհետև դեռ ուրոյն ազգ մը ձանչցուած չէինք, սակայն այժմ կացութիւնը փոխուած է և անհրաժեշտ պէտք մը հարկ է նկատենք զիւրապետներ հասցնելու հարցը, որովհետև Ազատ Հայաստան ամէն վայրկեան, ամէն քայլափոխի պէտք պիտի ունենայ անոնց:

Դիւանապետութիւնը, Եւրոպայի մէջ, մասնաւոր ճիւղ մը նկատուած է, և մարդիկ մէկ օրէն միւսը չեն կարող գիւտ ազգանքը ըլլալ: Յատուկ վարժարաններու մէջ ուսումը աւարտելէ վերջ, աշակերտութեան (արքանդիստ) շրջանը ունի լրացնելիք որ մէ յետոյ կը կուզեն երկրորդական կարևորութիւն ունեցող զիւրապետական պաշտօններու:

Յանուն Ազգին արտոյայտուելու իրաւասութիւնը ունեցող պաշտօններ շատ քիչներուն սահմանուած է ունենալ, և այն ալ կրկայամեայ փորձառութիւնէ մը վերջ, երբ ամբողջ ազգին կամ գէթ սուտար մեծաւասութեան վստահութիւնը չստանէ:

Աշխարհի ամէն կողմը, ժամանակ

առ ժամանակ եղած են նշանաւոր անձինք, որոնք զիւանագիտութիւնը քննադատած և միանգամ ընդ միշտ զայն բառնալու միջոցները խորհած և շատազոված են:

Ինքնին լաւ գաղափար մըն է անշուշտ, որովհետեւ զիւանագիտութեան չափ կեղծ արարք մը անկարելի է գուշակել, սակայն, պէտք կա՞յ ըսելու որ բոլոր այդ ջանքերը սպարդիւն մնացած են և զիւանագիտութիւնը օր ըստ օրէ աւելի կը յատուշանայ և կը տարածուի գրեթէ բոլոր կառավարութեանց միջև:

Ձինւորական ոյժը, Միլիթարիզմը նոյն իսկ, զիւանագիտութեան սովեւ ստիպուեցաւ խոսարհելու Չափազանցութիւն մը չի պիտի ըլլար ըսել թէ, ներկայ դարուս, զիւանագիտութիւնը կոչուած է աւելի մեծ դեր մը խաղալու, քան բոլոր նորահար պայմանները, օգանաւերը և կամ ուրիշ նմանօրինակ գիւտերը:

Երբ անցելոյն մէջ և ներկայիս, նինւորական պատկառելի ուժերու և տնտեսական բարձր դիրքերու աէր եզող ազգեր և կառավարութիւններ, այսօր կ'ըմբռնեն զիւանագիտութեան գերադասութիւնը, մենք Հայերս, որքա՞ն աւելի պէտք է սերտաւ փորձինք այդ միջոցին, որ թերևս միակն է մեր ազգային հարցին ներկայ տնդոտ փուլին մէջ, որ պիտի կարողանայ գնահատուիլ արդիւններ առաջ երբ անհոյն չունինք արդէն զինւորական կամ տնտեսական ոյժ մը որուն կարենայինք յենուել:

Մեզի համար բարեբաղդութիւն մը կրնանք սեպել միայն այն պարագան թէ, զիւանագէտներու այս սովին, երբ տակաւին ազգը չէ կարողացած արտադրել մեծ չափով, ունինք թուով ստուար զիւանագէտներ, յանձին Պօղոս Նուպարի, Նորատուհնեանի և այլն որոնք նոյն իսկ Եւրոպայի զիւանագէտներու կողմէ գնահատուած են:

Անոնք զիւանագիտական շրջանակներու մէջ ծանօթ դէմքեր են, որոնցմէ առկէ առաջ ուրիշներ այնքան օգտուած են, այժմ երբ անոնք համակ ազգասիրութեամբ իրենց աշակցութիւնը կը բերեն ազգային դատին, մեթոդ լրջախոնութիւնը և ճշմտիտ ազգասիրութիւնը չի՞ պահանջեր որ մենք անոնց կատարեալ վստահութիւն յայտնենք և սպասենք անոնց ջանքերուն արդիւնքին, փոխանակ սին և անտեղի քննադատութիւններով անոնց բարոյական ազդեցութիւնը և կորովը փճացել ջանալու:

Եւրոպական ազգերը, երբ նախարար մը կամ ուրիշ որեւէ պաշտօնական անձնաւորութիւն կը քննադատեն, ունին ուրիշներ անոր յաջորդ կարգելու: Մենք որոնք ունինք, արդեօք այսօրուան անձոնք քննադատները պիտի յաջորդեն:

Այնպիսի վայրկեանի մը ուր ազգը իր բոլոր յոյսը դրած է իր միակ պատկառելի ներկայացուցիչին կարողութեանը վրայ, որը անխոնջ աշխատասիրութեամբ կը մտքաուի, կը մարտնչի իրմէ շատ գերազատ ուժերու գէմ, ազգին իրաւունքը ձեռք ձեռքելու համար, միթէ ցաւալի չէ՞ տեսնել, Բաստրմանեան մը, որ ի գին ամենամեծ զոհողութեանց շինուելու վրայ եղող ազգային շէնքը խորտակելու ջանքեր կընէ:

Թերևս, իբր յեղափոխական գործիչ, արժէք մը կամ կարևորութիւն մը ունենայ, սակայն զիւանագիտութիւնէն բոլորովին անտեղեակ ըլլալը հասկնալու համար ապացոյցի պէտք չի կայ, որովհետեւ անոր գործածած լեզուն զիւանագէտի մը լեզուն ըլլալէ շատ հեռի է և Կ. Պօլսոյ երբեմնի խովուչական ոճը կը յիշեցնէ:

Գիւանագիտական մեր միակ ներկայանալի հարստութիւնը յանրապետ փճացիւտ աշխատելով, արդեօք Պրոբատըրմանեան չըմբռնինք և չի ըզգոթր թէ մեծ սխալ մը կը գործէ, սրտաւ մը որ նոյնիսկ եթէ ազգին դէմ գաւաճանութիւն կոչուի, մեղադրելի

չի պիտի ըլլայ, որովհետեւ Բաստրմանեան հասարակ մէկը չէ ճանչցուած և հակառակ անոր կատարեալ տգիտութեան, պարագաները զինքը զիւանագիտական շրջանակին հետ կապած են, և եթէ անոր հայտնաբերուած մեր բարեկամները կարևորութիւն չեն տար, անդին ունինք գրեթէ բաղդարար թշնամիներ, որոնք պիտի ուզէին օգտուիլ, հայ ազգը ներկայացնելով անմիաբան, անհամբարախ, և մէկ խօսքով նոյնիսկ անընդունակ կառավարական կողմի:

Որքան փոփոքելի է տեսնել հայ ազգը կարող զիւանագէտներով օժտուած, նոյնքան ցաւալի է տեսնել Բաստրմանեանի պէս մարդիկ, որոնք իրենց կարողութեան սահմանէն դուրս կը ձգտին գաղափարներ յայտնելու, եթէ երբէք կարելի է այդպիսի ատաւոցութիւնները գաղափար կոչել:

ՅԱԿՈՒՔ ԱԼՓԻՆՐ

Երէկ հողին յանձնեցինք Իզմիրի Հայութեան ամենէ կարկառուն դէմքերէն մին:

Յակոբ Ալփիար գիտուն մըն էր բառին իսկական իմաստով, որ պատկերէր հայութեան Դեռ հազիւ 60 ամեայ, կ'աճապարէ մեզմէ բաժնուիլ, մինչդեռ հայութիւնը դեռ կարօտ էր և եւս աւելի պիտի ըլլար մօտաւոր ապագային մէջ՝ իր խորհուրդներուն, իր թելադրութիւններուն:

Փոքր տարիքէն նուիրուած գիտական և ի մասնաւորի տարրալուծական գիտութեան, ինքնօգնութեամբ կրցած էր համել բարձրագոյն աստիճանի մը և իր բնաւուծարանն հասցնել կատարելութեան վերին աստիճանին:

Քաջամուտ Փրանսերէն լեզուին, գրեթէ իր մայրենի լեզուն չափ, գրաբարագէտ միեւնոյն ժամանակ, ծանօթ էր նաև եւրոպական լեզուներէն Անգլիերէնի և Իտալերէնի Անվատ աշխատող մը եղած է Պ. Յակոբ Ալփիար, յարատեւող ու միանգամայն աշխատասէր, որով կարողացած է ընկերական աստիճաններէն քայլ առ քայլ յառաջանալ և հասնիլ բարձրագոյն աստիճաններու:

Քննարկներ, զուտմաստ, բառին փրանսական աստիճանով արդէր մըն էր, կարող ժամերով իր ունիկորները զբաղեցնելու լարուած հետաքրքրութեամբ մը:

Համաշխարհային պատերազմի ըսկիզբն իր գաւազան գաստարակութեան համար ընտանեօք մեկնած էր Եւրոպա, ուր պատերազմի պատճառաւ ստիպուեցաւ մնալ և երբ զինագազարէն յետոյ կ'հանէր իր ծննդավայրը, թէեւ խաթարուած ֆիզիքապէս, բնաւ չէինք կրնար հրեական յել թէ՛ յանկարծական անկում մը պիտի ունենար ու կնքէր իր լազմաչարչար ու բեղմնաւոր կեանքը:

Յակոբ Ալփիարի պակասը եւս աւելի պիտի զգան իր ընտանիքէն ու զաւակներէն զատ իր մտերիմ բարեկամներն, որովհետեւ Ալփիար սիրելի դարձած էր իր հայ և օտար բարեկամներուն, որոնք անհուն սէր մը և անկեղծ համակրանք մը կ'առնէին այդ խելացի ու գիտուն հայուն հարգէպ:

Այսօր տխուր հարկին տակ կ'զլուտուինք ողբալու այդ անհետացող զէմքն, և յանձնելու զայն ցուրտ հողին, ճակատագրական առեղծուածային տնօրինութեամբ մը իր սիրելի մօր մահէն շաբաթ մը վերջ:

Ձինք սիրող և իր վրայ հիացողներէն մին, կ'ողբանք մեր յարգելի բարեկամին ցաւալի և անտեղեակ մահը մեր վշտակցութիւններն ներկայելով այս առթիւ Տիգրիս Ալփիարի, հանդուցելոյ սիրատուն զուակնք, Տօթթէօր ձէլէպի և իր աջնիւ տիկնոջ և Ալփիար ընտանեաց ու բոլոր պարագայից իրենց կրած այս գաւազանակիծ կորստեան առթիւ:

Այրի Տիգրիս Յակոբ Ալփիար, Մարկրիթ, Գրիգոր և Մարտիրոս Ալփիար և համայն ազգականք իրենց շնորհակալութիւններն կ'ներկային ամեն անոնց որք հաճեցան ներկայ գտնուիլ:

ՏՈՒՐ ԶԱԿՈՒՔ ԱԼՓԻՆՐ

Իրենց ամուսնոյն և հօր յուղարկաւորութեան և իրենց վշտակցութիւններն ներկայեցին այս տխուր մահուն ամթիւ:

ԲԱՂԻԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ՄԸ

Յոյց տալու համար պատերազմէն առաջուան և այսօրուան առօրեայ պէտքերուն արժէքները, ստորեւ կը դնենք այդ իրեղեններուն մանրամասնութիւնը, իրենց հին և նոր օրերուն մէջ ունեցած արժէքներով:

Ամենուն հասկնալի ըլլալու համար, այստեղ օրինակ կ'ցուցնենք 5-6 անդամներէ բաղկացեալ և 10 ուկի ամաթոշակ ստացող ընտանիքի պետի մը ամեն առօրեայ պէտքերը իրենց հին և նոր արժէքներով:

Table with 3 columns: Item name, 1914 price, 1920 price. Includes items like flour, oil, sugar, etc.

Վերելի ցուցակէն հետեւցնելով կրնայ ըսուիլ թէ ընդհանուր առմամբ մեր ամենուս ծախսերը առաջուանէն 14 անգամ աւելի եղած են:

ՍԱՐՊՈԼ

Ազգային Անցուկարձ

Չորեքշաբթի իրիկուն Բաղադ. մողովը իր շաբաթական նիստը գումարած է նախագահութեամբ Տեղապահ Հօր ներկայ եղած են Պ. Պ. Մ. Մօրուքեան, Յ. Հարենց, Տ. Աշնան, Յ. Պաքըճեան, Յ. Կիզէլեան, Վ. Պալպանեան:

Փողովը զբաղած է օրակարգի հետեւեալ խնդիրներով:

1. Տեղւոյս Ամերիկ. Ե. Բ. Միութիւնն նամակով մը կատարողէր արձայ հասարակութեան կողմէ 300 պատանի յատկացուի իրեն (14-20 տարեկան), և ինք զանոնք պիտի վարժեցնէ դաշտային աշխատութեանց և հողագործութեան: Միութիւնն կ'առաջարկէր նոյնպէս որ անոնց ծախքը զոնէ մասամբ մը հոգալուի Ազգ. Իշխանութիւնէն: Տեղապահ Հօր պաշտօնաւած է ժողովը, որ բանակցի այս մասին Ս. Կ. Որբանցի վարչութեան հետ: Աշխատութիւնները պիտի տեսնուին մօտաւորագէտ վեց ամիս:

2. Փողովը, հետեւեալ կերպով բաժնած է հայ պոյս - սքաւթներու կողմէ կատարուած քաղաքներու բաշխման իրր հասոյթ 6157 ոսկին: 3500 Ա. Կ. Որբանցին, 500 Հօգատարին, 157 աղքատ սքաւթներու, 500 Խարբերթ Մալաթիա, 300 Ա. Գարահիտար-Պուրտուր, 1000 Կիլիկիա 200 Թոգատ:

3. Փողովը նկատի առնելով Ազգ. Կ. Որբանցի պիւտճէն, 3500 ոսկին վրայ բարձրած է նաև մեծ հանգանակութիւնէն նոր դանձուած գումարէն: 3000 ոսկի, որով կը լրանայ Որբանցին երկու ամսուայ անհրաժեշտ եղող պիւտճէն:

4. Փողովը վտարացուցած է տեղւոյս Հայ Աւետարանականներու ներկայացուցիչները Հայրենիքի-Տուրքի յանձնաժողովին մէջ, որոնք են, քրօ. Կ. Պէտրոսեան և Ա. Արմաղանեան:

5. Տարագրելոյ յանձնաժողովը նամակով մը ցաւ կը յայտնէր որ տակաւին չեն տեսնուած իր մօտէն, դանաւնազան կայաններու մէջ ցանուցիլ որբերը, համաձայն Քաղ. Փողովոյ մէկ որոշումին, որով Փետրվարին վերջը պիտի լուծուէր այդ մարմինը, և անոր մօտ գտնուող որբերն ալ որոշուած էր յանձնել կեղծ Որբանցոյ, նոր կարգադրութեամբ մը: Փողովը որոշած է մէկ ամիս ևս յետաձգել Տարագրելոյ լուծումը:

6. Աղքատախնամ ընկերութիւնէն Պ. Յովհ. Գրմանեան ներկայաւորով, առաջարկած է կամ կանխավճար կամ փոխատուութիւն մը ընել յիշեալ ընկերութեան, որ Հայրենիքի-Տուրքի հաստատումով, չէ շարունակած կ'երեւի իր ամսական նուիրատուութիւններու հաւաքումը: Փողովը որոշում տուած է ժամանակ մը ևս գանձել այդ ամսականները, և երբ վերջնապէս կարգադրուի Հայրենիքի Տուրքի կազմակերպութիւնը, պիտի հաշուակցին Աղքատախնամ ընկերութեան հետ:

7. Փողովը ընդունած է Հ. Տուրքի բաշխիչ յանձնաժողովոյ այս առաջարկը որով ինք կատանձէր Մարգահամարի պատրաստութեան գործը, վարչութեան բեռը թեթեւցնելու համար:

8. Բաղադ. Փողովոյ նախագահ Պ. Միսաք Մօրուքեան մեկնումի առթիւ հրաժարական տուած է Վարչութիւնէն Որոշած է յղել զայն Գաւառ. Փողովոյ:

— Երէկ պատիւ ունեցանք ընդունելու այցելութիւններն Պ. Պ. Յ. Ամատունիի և Յ. Յ. Միլունիի և ունեցանք անոնց հետ հաճելի տեսակցութիւն մը:

Տեղական Լուրեր

ԳՈՂՈՒԹԵԱՄԱՅ Կ'տեղեկանանք որ Երկաթուղւոյ պաշտօնէից խնդիրն կարգադրուելու ճամբուն մէջ կ'զլուտուի: Ինչպէս երէկ կ'ըսէինք Իզմիր. Գաստապ երկաթուղւոյ տնօրէնութիւնն բնականաբար չպիտի ուզէր որեւէ անիրաւութիւն մը ընել ինչպէս ըսած էինք թիւրիմացութիւն մը կար ու կ'մնար և այժմ այդ թիւրիմացութիւնն վերցած ըլլալով, ամեն բան իր բնականոն վիճակը պիտի ըստանայ:

ՁինՈՒՈՐԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ ԶԵԼէն ընդհ. բանակատեղին կը ծանուցանէ հետեւեալը:—

Գրաւման գօտիին մէջ գտնուող Ճօլանճըլի լիճը, Թէքէ գիւղը, Պօգտաղ, Քէմէր և շրջակայքը որոնք թշնամիին ձեռք էին, մեր գունդերուն կողմէ գրաւուած են երկար և յամառ զիմադրութեան մը վերջ և թըշնամին ստիպուած է փոխելիլ դէպի Սալէհլի և Քէլէզլ:

Մեր վնասներն են 1 սպայ, 2 զինւոր սպանուած, և 1 սպայ 17 զինւոր վիրաւոր:

Թշնամիին իրական վնասները տակաւին չեն ճշդուած: Յարգ կառւի

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ ՄԸ

Հօնտօնէ կը հեռագրեն թէ, համաձայնականները թերևս Հայաստանի թուրքական Միջերկրականի վրայ նաևահանգիստ մը:

ԹՈՒՐԿԻԱ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆ

«Մտթէն» գրածին համեմատ՝ Սուլթանին Պօլիս մնալով վճռականօրէն հաստատուած է: Հնդկաստանի ընդհ. կառավարելին հաղորդուած է համաձայնականներու կողմէ տրուած այս որոշումը:

ՎԻԼՀԵԼՄ ԶՊԻՏԻ ՅԱՆՁՆՈՒԻ

Հորանտաի արտաքին գործոց նախարարը յայտարարած է թէ իր կառավարութիւնը չպիտի յանձնէ Քայզերը, մինչև իսկ թոյլ չպիտի տայ որ անիկա հեռանայ Հորանտայէն:

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՊՈԼԻՍ ՄՆԱԼԸ

«Տէյի Մէյը» կը գրէ թէ Սուլթանը շարունակաբար չպիտի մնայ Պօլիս մէջ: Ապագայ պետութեան կեդրոնն Անտաղիոյ մէջ պիտի ըլլայ և թագաւորը ժամանակ առ ժամանակ Պօլիս պիտի այցելէ կամ իրեն պալատ մը պիտի վերապահուի, որուն պահակախումբին մէջ պիտի գտնուին համաձայնական զինուորներ:

ՌԻԻԼՍԸՆ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ՏԵՇԱՆԵԼԸ

Մ. Նահանգաց նախագահ Մ. Ուելսըն հեռագիր մը ուղղելով Ֆրանսայի հանրապետութեան նախագահ Մ. Տէչանէլի, տնկեղծ բառերով շնորհակարար է գոյն՝ նախագահական բարձր պաշտօնին կոչուելուն առթիւ:

ՏԵՆԵՔԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆԸ

Ջօրավար Տէնէքին «Թայմը»-ի մէկ թղթակցին յայտարարած է թէ ինք բնաւ մտադիր չէ Սօվիէթներուն հետ բանակցութեան մտնելու: Կամաւորներու բանակը պիտի շարունակէ պայքարը Պօլշէվիքներուն դէմ:

ՅՈՒՇԱԳԻՐ ՄԸ

Կիւմիլճինաի մէջ վից գիւղեր, Ֆրանսական դրաման ուժերու ընդհ. հրամանատարին տուած յուշագրով մը կը բողբեն Պուլիար գրաւումին դէմ:

ԳԼԷՄԱՆՍՈ ԽԱՐԹՈՒՄԻ ՄԵՋ

Գահիրէէն «Թայմը»-ի կը հեռագրեն թէ, Մ. Գլէմանսո Խարթում (Եգիպտոս) հասած է:

ՌՈՒՄԱՆՈՅ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԸ

Ռումանիոյ գահաժառանգ իշխանը Շարլ. Աթէնք հասած է ծպտեալ կարճ գաղտնէ մը ետք, իշխանը մեկնած է դէպք Ալեքսանդրիա, ուրկէ պիտի անցնի Հնդկաստան և Ֆարս, կը կարծուի թէ գահաժառանգը մասնաւոր պաշտօնով կը մեկնի:

ՌՈՒՍ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹ. ԵՒ ՌՈՒՄԱՆԻԱ

Կարգ մը ուսու ազգայնականներ, որոնք Ռոտսայի գրաւումէն ետք Պօլշէվիքներէն խոյս տալու համար կ'աշխատէին Տրնիւթէր գետէն անցնելու են, թարկուած են Ռումանացիներու կողմէ բացուած կրակին: Ռումա ազգայնականները այսպէս երկու կողմէ կրակի մէջ մնալով ստիպուած են հոս դառնալ և իրենց արդի վիճակի մասին մանրամասնութիւններ կը պակսին Ռումա իոյ հանրային կարծիքը կը պարտաւէ Ռումանացիներու այս ընթացքը:

ՅՐԱՆՍԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

Թերթերը կը ծանուցանեն թէ Բարիզի և Հռոմի միջև բանակցութիւններ կը կատարուին պատրաստելու համար սուեւտրական գաշնագրեր: Այս գաշնագրի ներքին համեմատ նախնական նիւթերու և պատրաստ ապրանքներու փոխանակութիւններ պիտի ըլլան երկու երկիրներու միջև: Հռոմի Ֆրանսական զեպանը մեծ գործունէութիւն ցոյց կուտայ այս նպատակը իրագործելու համար:

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՄԱՆԻԱ

Պուքըշէն կը հեռագրեն թէ ուսմէն կառավարութիւնը որոշած է երկարամեջ Յունաստանի հետ կնքուած սուեւտրական գաշնագրեր, որ մարտ 18ին կը լրանայ:

Մ Ե Տ Օ Կ Ա Ջ Ի Օ Ն

Յ. ՊՕՍՐԱՆՃԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
ՍՍԱՑԱՍ Է
ԱՄԵՐԻԿԱՆ ՅԱՅՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԷ
ՄԱՆԵԱՅԻՆԵՐԻՆ ԱՆՈՐԱՆՈՒՄԵՆԵՐ

Կանանց շիք մանթոններ
Կանանց քօսթիւմ-թայիտներ
Արանց բալթօներ և քօսթիւմներ
Ամերիկեան կայսչներ
Հովանոցներու զանազանութիւն
Անկլ. նորածե մուշամպա վերարկուներ
ԳԻՆԵՐԸ ԱՆՄՐՑԵԼԻ
Շիշեկիւր փողոց թիւ 58
ԻԶՄԻՐ

Հ Ր Ա Ի Ե Ր

Շինութեան և վերականգնողական աշխատանքները, որպէս են, ճարտարագիտ. երկրաչափ. քանդակագործ, գծագրի, ատաղձագործ, երկաթագործ, որմնադիր, հիւան և շին. կը հրաւիրուին անպարտան ներկայ գրուելու: Երկրաչափ 7 Մարտ, տուածահան ժամը 10,30ին (ամառնային ժամ) Մեքսիկոյի վարժարանի սրահին մէջ, խորհրդակցելու համար յարաբերական խիստ կարևոր հարցի մը շուրջ:—
Հ. Ա. Բ. Մ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԱՄԲՈՐԴՆԵՐՈՒՆ

Ամերիկեան «Պլոք-Սթրո» հսկայ և արագընթաց շոգենաւը որ կը գտնուի նաևահանգիստ՝ պիտի մեկնի 6 Մարտ 920ին շարժութիւնը որ ուղղակի Նիւ-Եօքս առանց հանդիպելու Բրիտանիա նաւորին: Սոյն նաւը պատերազմի վերջին տարին ձող իջեցուցուած ըլլալով յանձնարարելի է իր մաքրութեան և արագութեան համար: Գրդ կարգը, մաքրութեան և կիրառուներու առատութեան տեսակէտով ուրիշ ընկերութեանց Ա. կարգերուն կը հաւասարի գրեթէ:

Գրդ ԿԱՐԳԻ ԳԻՆԻ, Է ԻԶՄԻՐՆԻԻ ԵՐՐՔ 100 ՏՈՒՐ

Աւելի մանրամասնութեանց համար գիրքը Ֆ. Միսիլի կամ Նալպանտեան ընկ.եան:

Ա Ջ Գ

Մեծ պահոց ընթացքին Առաջն. Տեղապահ Գեր. Տ. Յովհան Մ. Վարդապետ Կարապետեան՝ Արևազարի հանդիսաւոր արարողութեանց առթիւ, ինչպէս նաև կիրակի օրերը՝ քարոզչական շարք մը պիտի խօսի կեդրոնի և արուարձաններու Մ. Եկեղեցեաց մէջ հետեւեալ յայտագրի համեմատ.

- Մարտ 4 ԵՂ. Ս. Ստեփաննոս
- » 5 Ուր. Գարաթաշ
- » 7 Կիր. Ս. Ստեփաննոս
- » 8 ԲՂ. Ս. Լուսաւորիչ
- » 9 ԳՂ. Պայրաթըլ
- » 10 ԴՂ. Գորտէլիօ
- » 11 ԵՂ. Ս. Ստեփաննոս
- » 12 Ուր. Գարաթաշ
- » 14 Կիր. Ս. Ստեփաննոս
- » 15 ԲՂ. Ս. Լուսաւորիչ
- » 16 ԳՂ. Պուռնովա
- » 17 ԴՂ. Գորտէլիօ
- » 18 ԵՂ. Ս. Ստեփաննոս
- » 19 Ուր. Գարաթաշ
- » 21 Կիր. Ս. Ստեփաննոս
- » 22 ԲՂ. Ս. Լուսաւորիչ
- » 23 ԳՂ. Պայրաթըլ
- » 24 ԴՂ. Գորտէլիօ
- » 25 ԵՂ. Ս. Ստեփաննոս
- » 26 Ուր. Գարաթաշ
- » 27 Եր. Ս. Լուսաւորիչ
- » 28 Կիր. Ս. Ստեփաննոս
- » 29 ԲՂ. Ս. Լուսաւորիչ
- » 30 ԳՂ. Կէօզթէփէ
- » 31 ԴՂ. Գորտէլիօ

Ապրիլ 1 ԵՂ, Ս. Ստեփաննոս
» 2 Ուր. Գարաթաշ
Սկզբ. ժամը. Ժ. 8 Ին Ամու. Ժ.
» Արևելի. Ժ. 8.30ին » »
» Քարոզչ. Ժ. 9.30ին » »
» Կիր. պարգ. 9.30ին » »
ԱՋԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
(Կնէ)

ՆՈՒՆՁՈՒՐԳ

Առաջնորդարանին ներքին յարեփոխման շինութիւնները որոշուած ըլլալով նուազուրդի դրութեամբ կապալի (կէօթիւրի) տալ, անոնք որ տրամադիր են յանձնառու ըլլալու, կը հրաւիրուին ներկայանալ յառաջիկայ 1 Մարտ երկուշաբթի օրէն սկզբեալ մինչև չորեքշաբթի օր կէսօրէ վերջ ժամը 2.30էն 4 Առաջնորդարան, ստանալու համար ճարտարագիտ Պ. Արամ Թահթաճեանէ պայմանագրութեան մանրամասնութիւնները և պատրաստուած յատակագծին բացատրութիւնները:

Յանձնառուները պարտաւոր են, մինչև շարաթ. 6 Մարտ կէսօրէ վերջ ժամը 2.30ին իրենց պայմանները կնքեալ պահարանի մէջ ներկայացնել Առաջնորդարան, պատկանեալ յանձնաժողովոյ:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՉՄԻՒՆԻՈՅ

գաշտէն գտնուած են սպայ մը և 2 զինուոր սպանուած և վեց հաս ալ վիրաւոր:

ՀԱՆՐԱՅԻՆ առողջապահ. տնօրէնութիւնն հետեւեալ կը ծանուցանէ: Վերջին 24 ժամուան ընթացքին իզմիրի մէջ պատահած են ծաղիկի 2 դէպք:

Ազ շխարի մէջ 1 թիֆօ:
ՍՊԱՐԱՊԵՏ Ն. Բարասքէվօրուլօ, առջի օր «Պրիկթըն» զբօսանաւը երթալով, այցելութիւն տուած է անգլիացի զոմանտարին Մեկնուսին արձակուած են սովորական թնդանօթի հարուածները:

Նոյնպէս սպարապետը այցելութիւն տուած է «Լէմուս»ի հրամանատարին:

ՆԵԼԼԷՆ «Վէլոս» թորփիլանաւը, առջի օր կէսօրէ վերջ մեր նաւահանգիստին մէջ խարխալ նետած է:

ԲԱՂԱՔԻՍ նաւահանգիստը խորհրդ անվիտական «Տըպլին» յանձնաւոր 5500 թօնօ արողութիւն ունի և ծով իջեցուցուած է 1912ին: Ունի 8 թընդանօթ 152նոց, չորս 47նոց, և երկու թորփիլ արձակող գործիք:

Մեքենաներն 25 հարգար ձիու ուժ մը կը ներկայացնեն և ժամը 25 հանգոյց արագութեամբ կ'ընթանայ: ԳՈՐԿՈՒՃԱԻ ոճի զաղտնիքները տակաւին մաւթի մէջ կը մնան և չէ կարելի եղած ունէ հետք գտնել հեղինակներուն իսկութեան մասին:

Պ. Միտուլիս, Գողուճաի շրջակայքին ոստիկանագետ, որ քննութիւնները կը կատարէ, տեղական թերթի մը թղթակցին ըսած է թէ հակառակ ձեռնարկուած մանրակրկիտ հետազոտութեանց, ոճիքը խորհրդաւոր կը մնայ: Ոճագործները կարելի չէ եղած գտնել:

Այս մարդիկը խեղճօրէն կ'ապրէին և իրենց կեանքը չէր առթիւր ունէ նախանձ, կամ քէն իրենց զբաղմունքուն մէջ: Ուրեմն ոճիքն շարժառիթը այսպիսի զգացում մը չէր Գննութիւնները կը շարունակուին:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՆ

Ա. Կ. Ո.— Պ. Միհրան Գ. Միհրանեան 3 ո. Պ. Դանիէլ Էլմաստանի մահուան առթիւ: (Գ. Խ.)

ԼԱ ՍԱՄԱՐԻԹԵՆ

ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՒ ՆՈՐԱՏՈՒԹԵԱՆ

Հ. Գ. ՆԻԳՕԹԵԱՆ

ՅՐԱՆԿԱՑ ԹԱՂ ԹԻԻ 64-66

Վաճառատունս հասած են ամենափոքրին նորածնութեանց վրայ մետաքսեղէն և բրդեղէն տպրանոց խոշոր մթերք մը, որոնք թէ իրենց անմրցելի տծանութեամբ և թէ շիքութեամբը կրնան գոհացնել ամենազտուարահան ճաշակներն իսկ: Ապրանոց տեսակներն մի առ մի հոս թուել կարելի չըլլալուն միայն այցելութիւն մը բաւական պիտի ըլլայ հաստատելու մեր գրածին ճշգրտութիւնը:

ՊԱՐԳԵԻ ԲԵՐՈՂԻՆ

Պ. Խայր Երնի իւր գրպանի տետրակը կորսնցուցած է նոր փռան մօտ Ֆէթիլէ փողոց Պ. Տիգրան Տիրացուեանի զիմացի տան առջև:

Այդ գրպանի տետրակը գտնողին պիտի վճարուի 5 ոսկի եթէ յանձնէ Սիվրիսարեան Ազնաւորեան վաճառատունը կամ խմբագրատունս:

ԴՐԱՄԱԿԱՆ ՇՐԱՊԱՐԱԿ

Հօնտօն	չէք	405
Նիւ-Եօքս	»	0,85
Բարիզ	»	8 17/40
Հռոմ	»	6 22/40
Աթէնք	»	12 22/40
Անկլ. ոսկի		403
Տօլար		116
Փրանք		9 20/40
Լիր. Իտալ.		7 /40
Տրախմի		12 23/40
Լէյ		1 35/40
Ռուպլի		75
Մարք		1 20/40
Քուրօն		28
Ոսկի		486

ATLANTIC ASSURANCE



COMPANY, LIMITED.

79, CORNHILL, LONDON, E.C. 3.

Կ. Ո. ՈՍԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՆԵՐԿԱԹԱՑՈՒԹԻՉ

ԻԶՄԻՐ, ԲԱՍՍԱԺ ԲԷՇՏԻՄԱԼՃԻՈՂԼՈՒ ՎԵՐԻ ԹԱՐԿ ԹԻԼ 2

ԱՊՂՅՈՒՂԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դեմ.

NATIONAL UNION SOCIETY LTD.

LONDON

CENTRAL INSURANCE CO. LTD.

LONDON

Ծովային.

PHOENIX ASSURANCE COMPANY LTD.

LIVERPOOL

Դիմելի մանրամասնություններ համար.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ

Լ.ՆԻ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ՕՐՈՒՍՑ ԿՈՎԷՆ 40

ԵՒՐՈՊ. ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Վիեննական մամուլին ոճը բոստ այնպիսի փոխառուցում էր. — Նոր ազգային Մա. մուլը զննաց մինչև ձարը սպանու. րեամբ ամբաստանելու: Ահա առաջին թուլիս 28 ի իր մէկ յօդուածէն անցք վը. —

«... Զարը արդեօք մեզի պիտի սպաննա՞յ ուս սուրիններով. պէտք պիտի ըլլայ անոր անմիջապէս պա. տասխանելու թէ պաշտպանութեան այս քաղաքականութիւնը շատ վատ կ'երթայ պահպանողական վեհապետի մը...»

«Պահպանողական վեհապետ մը չպիտի կրնայ խաղայ այս կարգի գա. զափարններով. չպիտի կրնայ ձեռք առնել ի նպաստ Սերպիայ պայքար մը, որ ոճրափորձերու գրգռիչն է, առանց ձեռքնելու շատ մը ուղեղներու մէջ,

գաղափարաց զուգորդութիւն մը, ու. րուն վրայ միայն Պելկրատի մէջ պա. տանիները պիտի տարուէին հիանալու. Ի գործ զնել այսքան հակասական քաղաքականութիւն մը, միապետի մը համար պիտի նշանակէր ինքզինքին իսկ անհաւատարիմ գտնուելու և ցանկ անխոհեմ ձեռքով մը թունաւոր հունտեր հողի մը վրայ որ շատ տրա. մազիր չէ զանոնք ընդունելու...»

Պ. Սաղաօնօֆ միշտ տրամադիր Լօնտօնի դահլիճին պնդեց որ յառաջ տարուի Աւստրիոյ զինուորական գոր. ծողութիւնները առկախելու միջնոր. դութիւնը. բայց մինչև զինուորական գործողութեանց դադարումը, ընդուն. նելով որ միջնորդութիւնը պիտի քաշ քշել տայ իրերը, և ժամանակ պիտի հայթայթէ Աւստրիոյ Սերպիան ջախ. ջախելու, Յուլիս 29ին հրամանագրու. շեցաւ Օսէսաի, Քիէլի, Մոսկուաի և Քաղանի շրջանակներու զօրակազմ: Այսպէսով կը մտնէին տագնապին վճռական փուլին մէջ. այսինքն յա. շարժումներու զօրակազմու փուլը, ու. ոչ ոք ուզելով ետ մնալ հաւանական թշնամիէն, ճակատագրականօրէն պա. տաստութիւնէն գործողութեան ան. ցան:

Աւստրիական դահլիճը, իր ետեւէն գոցելէն վերջ բոլոր դռները, գերման ետաւաւարութիւնը կեղծեց ամենէն

ՔԱՐՄՈՒԹՈ Գ. ԵԱԳՈՒԷԼ

ԵՍՆՏԵՎԻ ԱՆ 7

(Փէշտիմալճ ր պաշը)

Անոնք որ կ'փափաքին Չամիչի զուտ օղի գործածել, անտրատ մաքուր և խնամով պատրաստուած, թող զի. մեն վերելի հասցէին, թէ մեծաքանակ և թէ փոքրաքանակ գնուաներու հա. մար,

Գինն Մին Մի Օնուի 50 ՂՐՇ.

Անհաւատալի պին մը, որովհետև այս ըմպելին արտածութեան համար պատրաստուած է, բայց արտածելիա. րելի չըլլալով տեղւոյս վրայ վաճառու սրողուած է այս աման գնով:

ԿԱԶԱԳՈՐԾ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

(Ս. Ստեփաննոսի փակին մէջ)

Հիւսնութեան և կահագործութեան արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր վերջին կատարելութեամբ կը շինէ: Կատանձնէ ամեն տեսակ յանձ նառութիւններ:

Մաքուր և խնամեալ գործ:

Գիները չափաւոր:

ԺԱՂՎՈՒՐԴԻ ՉԱՅՆԸ

Օր-Ռեյն Էպոս-Էլան և հասարակու

Սմբարապետ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԱԿՈՒԲԵԱՆ

Տարեկան բաժնեկին 700 ՂՐՇ.

ՏՊԱՐԱՆ ԹԱՄԱՐԻԱՆԵ

ԼԵՍՆԱԲԱՍ 1889ԻՆ

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպագրուին գրքեր, գրքոյկներ, տետրակներ, յայտարարու. քիւններ, հարսանեկան հրաւիրագիրներ, զեկուցատուներու մահազգներ եւն.

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին նամակաղբերներ, պահարաններ, հաշուեցուցակ. ներ, ընկալագրեր, վերջապէս վաճառատան մը վերաբերեալ ամեն տեսակ տպագրական գործեր:

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին տեղեկագիրներ, երկրորդական նամակ-հրաւիրա. գրեր տոմարներ եւ վերջապէս տպագրական արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր:

Ամեն լեզուէ՝ շԱՅԵՐԷՆ, ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ, ՅՈՒՆԱՐԷՆ, ՔՈՒՐՔԵՐԷՆ

ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՓԵՍՊՈՒՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍՆ ՏԵՍԱԿ ԳՈՅՆԵՐՈՎ

Մամուր և խնամեալ գործ օրուան զիններու վրայ

Տպարանս բաց է առաւօտէ մինչև եր կես գիշեր

խնդրանկներու համար

Վ Ճ Ա Ր Ս Ո Ւ Ն Ք Կ Ա Ն Խ Ի Կ

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“

Թերթիս ծաւալը աւելի ընդարձակուած ըլլալով, այժմ ի վի ճակի նեխ աւելի շայն տեղ մը այս ծանուցմանց բաժնիկն, նոյնիսկ երբ ամեն օր հարկ ըլլայ միեւնոյն ծանուցումն կրկնել, ինչ որ սակից առաջ ի վիճակի չէիմք ընկնու:

Գոհացուցիչ պայմաններ փոխ կամ մեծ, մեկ կամ աւելի ծա նուցմանց համար:

Դիմումներ կ'ընդունուին առաւօտէ մինչև եր կես գիշեր:

Կ Ա Ն Խ Ի Կ Վ Ճ Ա Ր Ո Ւ Ս

հաշտարար տրամադրութիւնները 28ին Պէթման չօրէկ կը խնդրէր Սըր Կէօ. չէնի զինք անտեղու: Այս արարողու. ցուց թէ ինք «Վիեննայի և Բեթթօլը. րատի մէջ ընելու վրայ էր իր կողմէ կարելին, որպէսզի այս երկու կասա. վարութիւնները յաջողի քով քովի բերելու և միասին բարեկամարար քննելու կացութիւնը» կրկ. նեց Անգլիոյ հետ գործակցելու իր փափաքը ընդհ. խաղաղութեան պահ. պանուսին համար:

Յուլիս 29ին գերման վարչապետը նորէն մարտ զրկեց Սըր Կէօչէնը կան. չելու համար ինքզինքն վշտացած ցոյց տուաւ, թէ շատ ուշ էր գործե. լու համար Սըր Կէօչէնը կրէյի թե. լագրութեան համեմատ: Այս յայտնեց թէ Վիեննա չափաւորութեան խոր. հուրդներ զրկած և տակաւին պա. տասխան չէ ստացած. բայց կը ջա. նար Լօնտօնի մէջ ծանօթացնելու թէ ինք պաշտպանած է Ֆորէյն Օֆիսի ճիգերը ի նպաստ ընդհ. խաղաղու. թեան:

Վարչապետին մօտէն հեռանալէ յետոյ, անգլիոցի դեսպանը անցու. արտ գործոց փոխ-նախարարին մօտ և «շատ վրդովուած» գտաւ Ֆօն Նա. կովը որ շատ անհանգիստ էր, Վիեն. նայ հանդէպ շատ քիչ շրջապագա. ութիւն ցոյց տուած ըլլալուն համար:

Վիեննայի գահլիճը շատ զերբազատ էր և ի վրայ ուէ պապիկ ճնշում «կրնար իրեն գահլիճի տալ իրերը և մեր տուչե զ'նել տալ կատարուած իրողութիւն մը», թերեւս բրիտանա. կան թիագրութիւնն փոխթացուցած էր պատերազմի յայտարարութիւնն... Յօն Եակով ուրիշ վրդովում մըն ալ կ'զգար. ֆրանսական կառավարու. թիւնն զինուորական կարգ մը միջոց. ներ ձեռք առած էր Լօնտօնի գահ. լիճը մեծ պարտաւորութիւններ ունէր հանդէպ վարչապետին և արտ. գոր. ծոց նախարարին. խաղաղութեան սի. րոյն համար, անոնք Վիեննայի մօտ կասկածելի գործած էին և տակաւին կ'վտանգուէին, թող տալով Ֆրանսայի զինուորական քայլեր առնել...»

Սակայն իրապէս վարձատրութեան մը արժանի էր: Եւ Պէթման չօրէկ զայն պահանջեց նոյն իրիկունն իսկ: Դեսպանը բերել առաւ կայսերական վարչատուճը և բացուցաւ անոր կը վախճար որ եթէ Ռուսիա Աւստրիոյ վրայ յարձակէր, եւրոպական հրդե. հում մը անխուսափելի պիտի ըլլար Անակաւ ճիգերու զորս չէր դադարել ի գործ դնելէ խաղաղութեան պահ. պանուսին համար» Այս բանէն վերջ կը պատմէ Սըր Կէօչէն, զօրա. տար գին մը տուաւ ապահովելու հա. մար Բրիտանական չէզոքութիւնը (Երոստակի)